# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**11 դեկտեմբերի 2015 թվականի N 169-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2015թ. դեկտեմբերի 9-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 1078-Ա որոշումը,**ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի գլխավոր մասնագետի և առաջատար մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝68-2.3-33,68-3.2-25) անձնագրերը՝ համաձայն հավելվածների:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-2.2-13) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Բաժնի պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Քարտուղարության պետը կամ Բաժնի գլխավոր մասնագետը:

Բաժնի պետը Քարտուղարության պետի, Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

***ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ*** ***Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ***

*2015.դեկտեմբերի 11*
*ք. Կապան*